



# Վանո Սիրադեղյան

## Արածեք ձեր խոտը

Մարկեսը ասում է՝ «Բազմացե՛ք, կովեր, կյանքը կարճ է»: Հետևեք իմաստունի խորհրդին, կերեք ձեր խոտը, կշտացեք ու բազմացեք խելքից դուրս, բայց դուրս մի՛ եկեք ձեր փարախի սահմաններից: Մի՛ մտեք հայոց լեզվի տաճարը, մի՛ շփոթեք այն ախոռի հետ:

Վայելեք սիլոս ու «ախրանա», ման եկեք՝ կոտոշներիդ ժապավեններ կապած, քարշ եկեք արեւելյան քաղաքների բազարներում եւ հաճույքով շնչեք ձեր մանկության հոտը: Փարիզ ընկնելիս՝ անպայման մտեք լիբանանյան ռեստորան ու պատվիրեք քյաբաբ, որովհետեւ ձեր տեսած Եվրոպան սկսվել է Բաքվի նախադուրսներից ու մեկընդմիջտ ավարտվել Աթենքի արվարձանների բանվորական ճաշարաններով: Անկաշկանդ որոճացե՛ք ձեր տխմար մտքերը աշխարհի համաժողովներում, դուք անխոցելի եք: Ոչ պատասխանատվություն է պետք, ոչ հողաբաշխ լեզու, ոչ առավել ես՝ ուղեղ, որովհետեւ ամեն ինչի դեմ մի «սպանիչ փաստարկ» ունեք, որ կրկնում եք անցյալ, ներկա ու ապագա ժամանակներով՝ «Բա որ մեզ մորթել են», «Բա որ մեզ մորթում են», «Բա որ հանկարծ մորթեն»... Իրոք, անասնական մտահոգություն: Կովի՛ ձեր հայրենասիրությամբ ձեր հայրենիքը պատկերացրեք որպես անասհմա՛ն յոնջայի դաշտ եւ կախզլուխ արածելով՝ գնացեք մինչեւ ռասս կգաք անդունդի: Կովեղեն ձեր թախիժով որոճացեք կոմերիտական հորթանոցի ձեր հիշողությունները, ապա վերստին կերեք, աղտոտեք ու պատկեք թրիքի մեջ, որովհետեւ ձեր իմացած տունն ու հայրենիքը այն է, որից պիտի անասնահոտը անպակաս լինի: Երբ ձեր չանեն հոգնի ծամելուց, ձգվեք դեպի խոսափողները եւ մի մտահոգվեք չորս ոտքի պատճառով, որովհետեւ եթե ձեզ բերել են այդտեղ, ուրեմն ինչ

աստիճանի պիտի իջեցված լինի խոսքի արժեքը: Բղավեք ու բառաչեք  
անկաշկանդ, որովհետեւ ինչ ձայն էլ հանեք, դա կլինի ազգի, հայրենիքի,  
Ժողովրդի եւ, իհարկեւ, «նվագագույն ախոռի» մասին: Կովի՛ ձեր  
անմունչությամբ արածեք ձեր խոտը, կերեք ձեր սիլոսը մինչեւ տրաքվելը, իսկ  
մնացածը տրորեք: Տրտինգ տվեք Հայաստանի կանաչ դաշտում, արեք ինչ անում  
է անտեր յոնջայի արտը ընկած անտեր կովը, բայց մի մտեք մեր հայոց լեզվի  
տաճարը, դա միակ բանն է, որ մնացել է մեզ, մնացած ամեն ինչը հարամել եք  
անասունի պես: